

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նախարար,

Դիմում եմ Ձեզ, որպես իշխանության ներկայացուցչի, որը երկրի բնակչության համար «բարձրաձայնել է» հակապետական, հակաժողովրդական, հակամարդկային, հակասոցիալական և հակակրոնական՝ «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Դուք ՀՀ կառավարության կազմում իրավագիտության ասպարեզում այն սակավաթիվ մտավորական պրոֆեսիոնալներից եք, որն ի վիճակի է հասկանալ և գնահատել այն անդառնալի հետևանքները, որոնք կառաջանան գործնականում այս նախագծի ընդունման և իրականացման դեպքում:

Կարծում եմ՝ կհամաձայնեք ինձ հետ, որ այս օրինագծի իրականացումը, արևմուտքի ծայրահեղ լիբերալ քաղաքականության առաջին և վերջին փորձը չէ՝ արմատապես փոխելու մեր ժողովրդի բարոյական արժեքները և պատմականորեն ձևավորված մտածողությունը՝ ոչ միայն տնտեսության, այլ նաև ավանդական ազգային գաղափարախոսության և ինքնության գլոբալացման նպատակով:

Ձեր ելույթում Դուք պնդում էիք, որ այս ոլորտում անհրաժեշտ է բարեփոխել ազգային օրենսդրությունը կապված ընտանեկան բռնության և ինքնասպանությունների թվի աճի հետ: Սակայն «չարի արմատը» ոչ թե «ընտանեկան բռնություններն ու ինքնասպանություններն» են, այլ երկրի բնակչության հիմնական մասի համատարած աղքատությունն ու հուսահատությունը:

Ի՞նչ եք կարծում, եթե ընտանիքն ամեն օր դժվարությամբ լուծում է «հանապազօրյա հացի» խնդիրը, ապա ընտանիքի անդամների միջև կլինի՞ «լիակատար հանգստություն, խաղաղություն և ներդաշնակություն», մարդիկ չե՞ն խելագարվի հուսահատությունից, չե՞ն լինի այդքան ագրեսիվ և վերջ չե՞ն տա իրենց երկրային կյանքին ինքնասպանությամբ:

Չե՞ք կարծում արդյոք, որ ընտանեկան կապերի քայքայման, ընտանիքի անդամների միջև և ընդհանրապես հասարակության մեջ ագրեսիվ հարաբերությունների և այլ արատավոր երևույթների հիմնական պատճառը մեր

երկրում առկա զանգվածային «ճոճանակային» արտազաղթն (հիմնականում՝ տղամարդկանց) է՝ «մի կտոր հացի համար»:

Հայաստանի կառավարությունը, գոնե մեկ անգամ գնահատե՞լ է մատաղ սերնդի փխրուն հոգեբանության վրա բռնության պրոպագանդման, սեռական բաց տեսարանների և կենցաղային գոեհկության ազդեցությունը, որն ամեն օր մատուցվում է մեր լրատվամիջոցների կողմից:

Ինչպե՞ս կարելի է բացատրել բարձրագույն կրթական հաստատություններ դիմորդների կրճատման միտումը, հատկապես այն մասնագիտությունների գծով, որոնց բնագավառում Հայաստանը պատրաստվում է դառնալ առաջատար երկիր տարածաշրջանում:

Սակայն սա «ժողովրդավարական և սոցիալապես կայացող» պետության «սառցաբեկորի» միայն տեսանելի մասն է: Գործնականում, Ձեր քարոզած օրինագիծն ուժի մեջ մտնելու դեպքում կիսաքրեական վերնախավի որոշակի՝ պաշտոնական դիրքն իրենց անձնական շահերի համար օգտագործող հատվածի համար, այս օրենքը լայն դուռ կբացի սեփական շահադիտական նպատակների իրագործման համար:

Շատերը Ձեզ հետ համամիտ կլինեն, որ մեր հասարակության մեջ հազվադեպ չեն ընտանեկան բռնություններն ու ինքնասպանությունները: Այս երևույթը բնորոշ է հանրությանը և առկա է բոլոր երկրներում: Ալբերտ Էյնշտեյնին հղված նամակում Զիգմունդ Ֆրոյդը մարդու ազդեցիկությունը բացատրում է գենետիկ ժառանգականությամբ, որը հնարավոր է ճնշել ընտանեկան, հասարակական դաստիարակությամբ և բարձր մակարդակի կրթությամբ: Հասարակությունը (առողջ), որը մտածում է իր անդամների մասին, մշակել է բազմաթիվ մեթոդներ բժշկա-հոգեբանական, բարոյական, հոգևոր, կրոնական և նույնիսկ վարչական և քրեական ուղղությամբ՝ մարդկության այս ախտի դեմ պայքարելու համար:

Եթե մեր հասարակության մեջ հասարակության և պետության կառավարման ամեն մի ճյուղ իր գործունեության հիմքում չի տեսնում իր քաղաքացիների իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և զբաղված է կորպորատիվ, ընտանեկան և կլանային շահերի բավարարմամբ, ապա ցանկացած օրենք, ինչպիսին էլ այն լինի, կծառայի միայն այդ շահերի պաշտպանությանը:

Վերոնշյալի հետ մեկտեղ, կցանկանայի տեղեկություններ ստանալ քննարկվող օրինագծի ֆինանսավորման ծավալների մասին, քանի որ ըստ առաջարկվող միջոցառումների, պետք է ստեղծվեն ապաստարաններ, վերապատրաստվեն համապատասխան հոգեբաններ, բժիշկներ և սոցիալական ծառայության այլ

աշխատողներ, պետք է կազմակերպվի ընտանիքների ֆինանսավորում, որոնք պատրաստ են ստանձնել իրենց ընտանիքներից վերցված երեխաների խնամակալությունը և յուրվեճալ պրակտիկայի այլ ձևեր:

Եվ, վերջինը. Հայաստանի Հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը դեռևս հույս ունի, որ Դուք և ՀՀ Ազգային ժողովի սթափ դատող պատգամավորները չեն ցանկանում խորացնել պառակտումը հասարակության և իշխանության միջև:

Ժողովրդի համբերությունը անսահման չէ...

Լևոն Ներսիսյան

Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի տնօրեն